



Գանձ

Ելքի միջոցները մի թղթակցութեան է տրամադրուած Կ. Պոլսի «Բիւզանդիոն» լրագրի մէջ «Արցախեցի» ստորագրութեամբ, ինչ ամեն տեսակ զրպարտութիւններով:

Որովհետեւ «Աշակի» էջերում մի քանի տարիներէ ի վեր եւս երբեմն հանդէս եւմ գալիս «Արցախեցի» ստորագրութեամբ, ուստի սրանով չպիտի մտնուի, որ յիշեալ յօդուածը իմ գրչի արդիւնքն է, և եւս ըստ չեմ եղած էլ միջամտելու: Հրապարակով բողոքում եմ այդ ձրիակեր և մշտական թղթակցի դէմ, որ այնքան անազնի է գտնուել, որ ուրիշ անուան տակ թաղանթով, իր գոնիկ վայրահալութիւնները անց է կացրել է ֆէյդիկներէ աշխարհը:

Արցախեցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆ

Նոյեմբ, յունվարի 10-ին

Յունվարի 3-ին քաղաքային ժողովարանում օր. օր. Նունէ Մարգարեանի, Ամալիա Մակեդոնեանի և պ. Յակ. Տէր-Պողոսեանի եւանդալիստական եկեղեցւոյ կայացաւ տոնածառ և պարահանդէս յօդուած Նոյեմբ. քաղաքային ուսումնարանի և իմ օրհորդական մասնաւոր դպրոցի չքաւոր աշակերտներէ և աշակերտուհիներէ: Մտաւոր եղաւ 135 ր. 10 կօպ., ծախսը 45 ր. 13 կօպ., զուտ արդիւնք 89 ր. 97 կօպէկ:

Թող տուէր խնդրեմ ձեր լրագրի միջոցով իմ խորին շնորհակալութիւնը յայտնելու թէ յիշեալ աշխարհ օրհորդներին և յարգելի պարոնին և թէ միւս եւանդալիստ օրհորդներին, որոնք, համակրելով բարի գործին, ամենայն սիրով նպաստեցին տոնածառի և երեկոյթի անցումներուն:

Շնորհակալութիւն յայտնելու ժողովարանի աւագիններին, որոնք ձրիաբար տուել էին քաղաքային ժողովարանը: Վառ. Ապրիլեան

ՆՅՈՒԹԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի դատաստանական պալատը յունվարի 18-ին ընդնց մի հետաքրքիր գործ, որ վերաբերում էր Շուշի քաղաքի բնակիչ Համբարձում Հարունեանցիին: Ակցիոնային վարչութիւնը սկսել էր Հարունեանցիի դէմ գործ, պահանջելով 88,000 ռուբլի գանձարանի օգտին: Ակցիոնային պալատեան Ապօստօյով գտել էր, որ Հարունեանցի գործարանում իբր թէ խառնուած են եղել օրեկալիստայն եղած նիւթին նաև գինի, որպէս զի աւելանայ այն սպիրտի քանակութիւնը, որ չէ ենթարկուում ակցիոնային հարկի: Դանձակի նշանագրական դատարանը վճռել էր գործը գանձարանի օգտին, բայց Թիֆլիսի դատաստանական պալատը, մանրամասն ծանօթանալով գործի հետ, գտաւ ակցիոնային պալատեանի առարկութիւնները անհիմն և չափազանցական և արդարացրեց Հարունեանցիին: Մեղադրվածին պալատարանում էր երդուեալ հաւատարմատար Տէր-Ստեփանօզ:

Թիֆլիսի ցիրկում, յունվարի 18-ին, ներկայացման միջոցին, տեղի ունեցաւ մի սարսափելի դէպք: Դերասանուհի Պատրիկա յանկարծ ընկաւ տրագիկային, բայց չը կարողանալով ընկնել ցանցի վրա, սաստիկ կերպով խելիքի վեց սիւնին ու չըջախայտին և իսկոյն մեռաւ:

Թիֆլիսի քաղաքային դուռն իր վերջին նիստում որոշեց մի տակսան բարձրացնել մէկ կօպէկով, այն է տաւարի մի գինը, փոխանակ 7 1/2 կօպէկի, նշանակել 8 1/2 կ., իսկ ոչխարի մի գինը 8 կօպէկի չինել 9 կօպէկ:

Մենք լսում ենք, որ Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութեան օգտին յունվարի 31-ին Արտիստական ընկերութեան թատրոնում տըրվելու է մի հայերէն ներկայացում՝ կօնցերտով և պարահանդէսով, որին մասնակցելու են մի խումբ օրհորդներ և պարուհիներ, որոնցից շատերը առաջին անգամն են ընմ դուռ գալիս: Մասնակցողներն են. օր. օր. իշխ. Արդուսեան, Լօրդանեան, Միրմանեան, Անանեան, իշխ. Բեհրոսեան, Ալեքեան, Աբրահամեան և իշխ. միւրեան, պ. պ. Ալեքեան, Գրիգորեան, Միրմանեան, Փրիգորեան և Յուրիսեան:

Երկուշաբթի, յունվարի 18-ին, Թիֆլիսի արքունական թատրոնում կայացաւ դերասանուհի Օլգինայի բեմադրել: Խաղում էին «Կարմէն» օպերան: Օլգինա կատարում էր Կարմէնի դերը մեծ հմտութեամբ և մի առանձին կօրով, որ տալիս է Կարմէնի տիպին ամբողջութիւն և ոյծ: Օլգինայի ձայնը թոյլ է և յոգնած, բայց խաղը խելացի է, մտածված և իր զգացմունքով թատրոնը լիքն էր: Դերասանուհին ստացաւ շատ փառքեր և ընծաներ, և արժանապաւ բուռն ծափահարութիւններով:

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Ամսիս 14-ին Դանձակի մայր-եկեղեցւում կատարվեց հանդիս»

սաւոր պատարագ Վեհափառ Վաթիկոսի աւանդակով: Պատարագին էր մեր վիճակի առաջնորդական փոխանորդ Բագրատ վարդապետ Թաւաքալեան. երբում էր քաղաքային դպրոցի աշակերտներին կազմած քառանկան խումբը, բաւական ազոդ ու ներդաշնակ: Հանդիսին ներկայ էին երկու սեռի աղօթողները մեծ բազմութիւն, տեղական պետական ու մասնաւոր դպրոցներէ հայ աշակերտներն ու աշակերտուհիները իրանց դաստիարակներով: Պատարագի վերջում հայր Թաւաքալեան գլխին ներկայ եղող բազմութեան մի համառօտ ու ազոդ բարոյով: Բացատրելով տօնի նշանակութիւնը, նա համեմատաբար երկար կանգ առաւ հասարակական անտարբերութեան, լըքման ու դիտակցութեան բացակայութեան վրա: Հասարակութիւնը ամեն քայլափոխում ու դէպքի ամեն մի սրբութիւն արտայայտում է կատարեալ անտարբերութիւն. ոգևորութիւն, սրտի ու հոգու բարձր թիւիչներն ոչ մի բանում ու ոչ մի տեղ չեն նկատուում այժմ: Անբողջական է այդ դրութիւնը, թէ մշտական դժուար է առել. բայց արդի նշանները յօդուած վերջինն են...»

ՄԵՂՐԻՑԻՑ մեզ գրում են. «Մենք հաղորդել էինք, որ մեր հասարակութիւնը խնդիր է առաջարկել կառավարութեան՝ այստեղ միջառնայն դպրոց բանալու: Մեղրին, որ մեր գաւառի մտաւոր անապատի մէջ մի օաղիս էր ներկայացնում, իր օրինակով չէր կարող չազդել և մեր միւս գիւղերի հասարակութիւններին վրա: Այդպէս, լսում ենք, որ մեզ հետեւել են և մեր հարևան Շվանթիս գիւղացիները: Որեւորս այդ գիւղի հասարակութիւնը մի համախօսական թերթով դիմել է կառավարութեան թղթուղթիւն խնդրելու՝ բանալ իրանց գիւղում միջառնային եկեղեցական-ձրիական դպրոց: Հասարակութիւնը առաջարկել է նպատակ 250 ռուբլի և մի դեռնատին հող: Լսում ենք, որ մի այդպիսի խնդիր էլ Կարման գիւղացիներն են մտադիր ուղարկելու: Այդ երկու գիւղերը խաբխալում են աղիտութեան մէջ: Ուրախալ երեւոյթ է, որ գիւղացիները ուսման բարձր նշանակութիւնը հասկացանք:

ՔԱՐՎԱՆՍԱՐԱՅԻՑ մեզ գրում են. «Մեր ժողովուրդը ընտրել է Տինգ հողի, որոնք վարելահողերը պէտք է հաւասարեցնեն գիւղացիներին մէջ, բաժանելով չնչի վրա. տեմենդ որքան կաշտով վնաս ընտրվածներին աշխատութիւնները: Առ այժմ աւելորդ չէ յիշեցնել, որ զուտ երկրագործից հողեր առնել և տալ զուտ վաճառականի, բաւական ծանր պատասխանատուութիւն է:

ՆՈՐ-ՆԱՍԻՋԵԻՍԻՑ մեզ գրում են. «Յունվարի 3-ին տեղական Հոփիսթեան օրհորդաց ուսումնարանում տոնածառ էր, որ սարքված էր մի քանի նուիրատու տիկնիկներին հաշով, և բաւական մեծ ուրախութիւն պատճառեց փոքրիկ սանուհիներին: Ուսումնարանի գլխաւոր դասընթացը կանգնած էին երկու տոնածառեր, գեղեցիկ զարդարված և մի սեղան, որի վրա դարձված էին զանազան նուէրներ երեխաների համար: Երեկոյթը սկսվեց նրանով, որ բոլոր աշակերտուհիները իրանց ուսուցչուհիներով մտան կաթով զաշիւծ և հերթով ամեն մի աշակերտուհի ստացաւ զանազան նուէրներ: Դրանից յետոյ արդէն սկսվեցին եւրօպական պարերը, որոնք շարունակվեցին մինչև գիշերված ժամի մէկը բարձր բաժանմունքների համար, իսկ առաջին 3 բաժանմունքները ցրվեցան ժամի 10—11-ին: Այդ երեկոյթին, բացի ուսուցչուհիներից և ուսուցիչներից, կային և հիւրեր: Այդպիսի հանդէսներ սաքեցը, ի հարկէ, շատ ցանկալի է, մասնաւոր այնպիսի ուսումնարաններում, որոնք երեխաների մեծամասնութիւնը չունենող ընտանիքներին են:

ՄԵՂՐԻՑԻՑ մեզ գրում են. «Ամսիս 5-ին, ձրագալաց երեկոյան, տեղիս երիտասարդութիւնը, ուսումնարանի նախկին աշակերտներին հետ, ակադեմիա ման գալով՝ ժողովեցին 30 ր. և այդ դուռնը յատկացրին տեղիս չքաւոր ընտանիքներին օգտին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԵՏԸ

«Մակեդոնական կօմիտէ»-ը, որի պարագլուխներն են՝ Լիւնչով, Բաղդի, Ստանիւիւ և Լապօզ, այս օրերս իրենց մեծ պետութիւններին մի զեկուցաբերով, որի մէջ մատակցող անկողի կրեւել կղզու վրա տեղի ունեցած վերջին

անցքերը, միջնորդում է մոյնել Մակեդոնական ընդարձակ ընթացքները: Բերում ենք այդ զեկուցաբեր վերջաբանութիւնը:

«Մակեդոնայի և Ադրիանօպօլի յուսահատ դրութիւնը ամենքին յայտնի է. ահա թէ ինչու մենք չենք լսում այն բոլոր զեկուցաները և բարբարոսութիւնները, որոնց ենթակայ են քրիստոնեաների կեանքը, պատիւը և գոյքը: Մենք, սակայն, մեր պարտականութիւնն ենք համարում յայտնել, որ այդ չըջանալիքի քրիստոնեայ ազգաբնակչութիւնը այդ ամենը այլ ևս տանել չէ կարող և եթէ եւրօպական դիտմանաւոր, կրեւելին ինքնավարութիւն տալով, նոյնպիսի ընթացքներ չի մոյնի Մակեդոնայում և Ադրիանօպօլի վրայէտում, ընթացքներ, որոնք մասնաւոր նախատեսված են Բերլինի դաշնագրով, պէտք չէ զարմանալ, եթէ մի օր կիմացվի, որ յուսահատութեան հասած ազգաբնակչութիւնը ստիպված է եղել ամենաճարպեղ միջոցներին դիմել: Ահա թէ ինչու կօմիտէն դիմում է ամբողջ քաղաքակրթութեան աշխարհի մարտաւար զգալի մունքներին՝ յուսալով, որ այս անգամ քրիստոնեայ ազգաբնակչութիւնը թիւրքաց լծից ազատեւր փորձը չի գնվի քրիստոնեաների թափած արիւնի գնով:

ՆԱՄԱԿ ԱՌԱՅՐԱՅԻՑ

Վիէննա, յունվարի 20-ին

Երկու օր առաջ Վիէննայի կայսերական թատրոնում ներկայացվեց Գերարտ Հաուպտմանի «Առաւել» ձէնը: Հեղինակը անձամբ ներկայ էր և շատ ծափահարվեցաւ: Խաղի նիւթը վերին աստիճան պարզ է. մի կառապան երկրորդ անգամ կաժմուհանայ, կը խաբվի և անձնասպան կը լինի: Բայց որքան լաւ դիտված, ճշմարիտ պատկերներ կան, այդ նոյն իսկ ընդարձակ ընդարձակութեան մէջ է կարելի պարզել: Տարբէ է գործը կարգաւ ամբողջ:

Մանօթ Շէնէրէր և Վօլֆ գերման-ձայրահեղ երեսփոխանները մի նոր շարժում սկսեցին Վիէննա, այն է՝ կաթիլների մէջ պրօպագանդա անել, որ բողոքական դառնան: Մի քանի հարկեր իրանց նման յիմարտութեան մէջ գտան, որոնք անմիջապէս կրօնափոխ եղան, իրանց վրա խօսեցնելու համար: Ծգեղ երկոյթը սն է, որ Վիէննայի բողոքական քարոզիչը քաշվաբում է այդ շարժումը:

Հակահրէաների օրդան «Դօպլէ» Թօլստոյան մի ժամանակից ի վեր շատ հետաքրքիր և լաւատեղեակ յօդուածներ է հրատարակում: Ուսումնարանի ընկերական և տնտեսական կացութեան վրա: Այդ ուսումնարանութիւնները կատարեալ անկողմնակալ ուղով են գրված ու արժանի ուսանայ ընթերցողներին ծանօթացնելու: Վերջերս հոս եկաւ Իվիկեան երկուրդուս Հայերը, այլ ևս ձանձրացած հոգեւորականների այցելութիւններից, ու և է ուշադրութիւն չը դարձրեցին նրա վրա, և եւս այդ յիշատակում եմ իբրեւ մի առաջադիմութիւն: Այժմ հոս է գտնվում պ. Գարեգին Գօրջեան, ուսանայ համակրելի գրողը, որը այլ և այլ թերթերի մէջ հրատարակած է Ադա Նեղրիի գեղեցիկ թարգմանութիւններ: Ա. Լիւնեան

ՆԱՄԱԿ ԹԻՐԻՔԻՑԻՑ

Վան, յունվարի 4-ին

Թանգուլիւն ու աղքատութիւնն անհեղի հրէշի մը նման երևան եկած կը ստկացունէ արդէն առանց այդ էլ սարսափահար ժողովուրդ: Գործերն ու առուտուրը օր օրի վրա կը նուազին և կանցնեն մասնաւոր դրամատէրերի ձեռք. արդէն մեր երկրի վաճառականն ու հասարակ խառնութեան ընտանիքն անհաշիւ զի ամենամեծ վաճառականն իսկ կը տեսնեն օր 1/2 արշնող ու և է շորեղն և կամ 5—10 փարպիկ (1—2 կօպէկ) ուրիշ ու և է ապրանք կը վաճառէ. ալ ուրեմն ինչպէս կարողանան ապրել խեղճ, հասարակ խառնութեաններն Հայաստանիները, որ նոյնպէս կը գտնվին կարգ մը թիւրք ու հայ հարուստ աղանեւ ըլլով իրենց բնահանգը: Նամեմատ օր օրի վրա գինը կը բարձրագործեն: Տեղաւոր քաղաքացիութիւն Հաւան փաշան, փոխանակ այսպիսի անխիղճ գործերու դիմացն առնել տալու, ինքն ևս պատճառ կը լինի գնիւր. բարձրացման, զի ամենամեծ հայաւաճառն ինքն է. և այսպէս շատ հաւանական է, որ թիւ ժամանակէն արւեստական ստկալի սով մը երևան հանեն...: Արդէն այժմեանից հայի թանգուլիւն պատճառաւ աղքատները այն աստիճան քաղաքացած են, որ այլ ևս չէ կարելի փողոցները և կամ շուկաները այն ու գարձ անել: Քաղաքացի հայաբաւոր ընտանիքներ էլ կան, որոնք մուրալ կը կարողանալով, իրենց տուններու մէջ սո-

վամահ կը լինին, այնպէս որ օրերով ու շաբաթներով տեսակ-տեսակ վնասակար բոյսերով ու բանջարեղէններով կը կերակուին: Պատահած է, որ շատեր ալ անօթութենէ մեռած են: Եւ երբ քաղաքի վիճակն այս է, հեշտ է եզրակացնել նաև գիւղերու վիճակն այլ: Չուղիւղ նկարագրելի դիւղացիներու այժմեան ամենայնուսահատ վիճակն, կը բաւականանամ ըսելով թէ այս շաբաթներ Վանից 6—7 ժամ հեռու գտնվող Խիլիզ գիւղին մէջ 8—10 անձնեք սովամահ եղած են... Ճիշդ այս վիճակն են գրեթէ բոլոր հայ գիւղերն:

Գերմանացի Տախտոյ տօքտօր Բէլքն հաստատելով այս դառն իրականութիւնն, բաւականաչափ ցորեն և դրամ յանձնած է մեր առաջնորդ հօր՝ յիշեալ գիւղացիներուն բամբերու համար, սակայն ինչ կանէ կաթիլ մի ջուր հանդիս ուլկիանի մէջ... ոչ միայն այս՝ այլ նոյն իսկ բողոքականներն ու զօմիտիկեաններն մեծաքանակ օգնութիւններն ոչ մի փոփոխութիւն առաջ չեն բերել ժողովրդեան թշուառ վիճակին: Եւ կառավարութիւնը այս ամեն բանից տեսնելէն վերջ, փոխանակ ժողովրդեան ապրուստի միջոցներ տալու, իր հարկերը օր օրի վրա աւելի խտրութեամբ կը հաւաքէ: Վահ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Polit. Corresp.» լրագրի Լօնդօնի թղթակցը գրում է, թէ անգլիական մամուլի մէջ սաստիկ տարածված է այն կարծիքը, որ շուտով ապստամբութիւն կը սկսվի Մակեդոնական Սակայն այստեղի կառավարչական շըրջաններում այդ բանին չեն հաւատում: Այն նըշանաւոր ոյժերը, որ Բ. Դուռը ունի Մակեդոնիայում և դեռ կարող է օգնական զօրքեր էլ ուղարկել, կարող են զսպել յեղափոխական աւան ձգտումները: Բացի դրանից ասում են, որ Ռուսաստանը կրկին անգամ խորհուրդ տուեց քաղաքական կառավարութեան՝ դիմադրել մակեդոնական հարցի յարուցմանը:

«Պարիզի մի քանի լրագրիչներ շարունակում են խօսել Գերմանիայի հետ բարեկամանալու հարցի մասին, իսկ մի քանիները մինչև անգամ հաղորդում են, թէ շուտով Վիէննա կայսրը կը տեսակցի նախագահ Թորի հետ Բիլիթում: Սակայն գերմանական լրագրիչներից շատերը յայտնում են, որ հազիւ թէ մի այդպիսի համաձայնութիւն անպայման ցանկալի լինի, որովհետեւ Էլզաս և Լոտարինգիան վերադարձնելու դադափարից ֆրանսիացիներն մեծամասնութիւնը դեռ ու չէ հրաժարվել:

«Փրանսիական պատգամաւորների ժողովի բնօրէնային յանձնաժողովը զեկուցանող պատգամաւոր Պէլլան իր զեկուցման մէջ ներկայացրեց Փրանսիայի ֆինանսական դրութեան մի հետաքրքիր պատկեր: Մասնաւոր հետաքրքիր են այդ հաշիւի մի քանի փաստերը: Փրանսիայի ազգաբնակչութիւնը կազմում է Եւրօպայի ամբողջ ազգաբնակչութեան մէկ տասներորդ մասը, այն ինչ զօրքի և հաւատարմի վրա Փրանսիան ծախսում է այն բոլոր գումարներին հինգերորդ մասը, որ այդ առարկայի վրա ծախսում են եւրօպական պետութիւնները: Ոչ մի ուրիշ պետութիւն այդքան մեծ գնիւղական ծախսեր չէ անում: Ապա զինուորական վարչութիւնը, զեկուցման խօսքերով, հանգիւն և մի և նոյն ժամանակ անօթուտ ծախսեր է անում: Շատ մեծ են ամեն տեսակ զեկուցմանը Օրինակ, զինուորական մէկ միլիոնը հրամայեց զօրքի մէջ ընդունել 15,000 հիւանդ մարդկանց միայն այն պատճառով, որպէս զի զօրքի թիւը թղթով վրա մեծ երևայ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Լօնդօնից հեռագրում են, որ ամերիկացի Տեւլա հնարել է թղթախոր դէմ մի գործիչ, որը երեքտարակնութեան միջոցով թղթածին է մոյնում մարդկային մարմին մէջ և ոչնչացնում է թղթախոր բացիները:

«Պապին մեծ հոգս է պատճառում,—ինչպէս գրում են Հռօմից գերմանական լրագրիչներին,— Եւ. Պետրոսի լուծալը սոված եկամտով պակասելով Այժմ այդ լուծան պակասել է մինչև 2 1/2 միլիոն: Վատիկանի դրամագլուխները, որոնք զեկուցված են անգլիական և ֆրանսիական բանկերում, այժմ հասնում են 80 միլիօնի, իսկ տասը տարի առաջ այդ դրամագլուխը 20—30 միլիօնով աւելի էր: Սպէկուլացիաները և վատնումներն են այդ անապին պակասումների պատճառը: Վատիկանի ծախսերը, որ տարեկան 5 միլիօնի է հասնում, արդէն չեն ծածկում եկամուտները, և ստիպված են լինում դրամագլուխը ծախսել: Պապը կորուստ ցանկութիւն յայտնեց կրօնատն ծախսեր, որպէս զի դրամագլուխը անձեռնմխելի մնալ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԴՈՐՈՍԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

Բերլին, 18 յունվարի: Ի նկատի ունենալով տարածված լուրերը՝ թէ կայսերական կանցլերը դիտարկութիւն ունի հրաժարական տալ,

